ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 4, 2025Թ. ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025

Ընտրությունների ամփոփում

- Նոյեմբերի 4, 2025թ. California-ում անցկացվելու են Նահանգային հատուկ ընտրություններ:
- Los Angeles վարչաշրջանում գրանցված յուրաքանչյուր ընտրող կստանա փոստով քվեարկության (VBM) քվեաթերթիկ և կարող է քվեարկել նաև անձամբ:
- Այս ընտրությունների ընթացքում գործելու են ավելի քան 400 քվեատուփեր և 251 քվեարկության կենտրոններ:
- Սա հատուկ ընտրություն է, որն անցկացվում է ընտրական հիմնական ցիկլից դուրս՝ նահանգային օրենսդրական նախագիծ 50-ի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Օրենդրական նախագիծ 50-ի վերաբերյալ

- **Ինչ է սա.** Սահմանադրական փոփոխություն, որը թույլ է տալիս ժամանակավոր փոփոխություններ կատարել California-ի կոնգրեսական շրջանների սահմաններում մինչև 2030 թվականը:
- **Ինչ է նշանակում սա ընտրողների համար.** Եթե այն ընդունվի, որոշ ընտրողներ ապագա ընտրություններում (ներառյալ 2026 թվականը) կարող են ընդգրկվել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի այլ շրջանում:
- **Ինչ այն չի անում.** Այն չի փոխում ընտրողների իրավասությունը, գրանցումը կամ քվեարկության տարբերակները:

Պաշտոնական քվեաթերթիկի տեքստ

Նահանգի օրենսդրական նախագիծ 50. Թույլատրվում է կոնգրեսի շրջանների քարտեզների ժամանակավոր փոփոխություններ՝ ի պատասխան Texas կուսակցական վերաբաշխման սահմանադրական փոփոխության: Պահանջում է մինչև 2030 թվականը Կոնգրեսի նոր շրջանային քարտեզների ժամանակավոր օգտագործում: Հանձնարարում է անկախ Ընտրական շրջանների վերաբաշխման քաղաքացիական հանձնաժողովին վերսկսել Կոնգրեսի շրջանային քարտեզների ընդունումը 2031 թվականին: Սահմանում է քաղաքականություն, որն աջակցում է ամբողջ երկրի անկուսակցական ընտրական շրջանների վերաբաշխման հանձնաժողովներին:

Ֆինանսական հետևանքներ. մինչև մի քանի միլիոն դոլարի միանվագ ծախսեր շրջանների համար ամբողջ նահանգում՝ ընտրական նյութերը թարմացնելու համար՝ դրանք արտացոլելու Կոնգրեսի նոր շրջանային քարտեզներում: